# ՆՈՐ–ԴԱՐ

№ 189 ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 14 Դեկտեմբերի 1902 Շաբաթ, 14 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 189

Տարեկան 10 րուբ., վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կոպ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հատով 5 կ.։ Բաժանորդ ենգրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Նպատակայարմար դիտողութիւններ։
Քրոնիկոն լուրեր։
Մեզ գրում են.—Շուշուց։ Վաղարշապատից։ Օլթիից։ Ղազախից։
Նամակ խմբագրութեան։
Կ. Պոլսի հայ թերթերից։
Մամուլի շուրջը։
Անմիտ ազատամտութիւն։
Թղթակցութիւններ.— Ալէքսանդրապոլ։ Նամակ Պարսկաստանից, Սալմաստ։
Քաղաքական. — Բուլղարիա։ Թիւրքիա։ Վենէցուէլա։
Էմբերների ընտանիքը։
«Նոր-Դար»-ի հեռագրները։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 13 դեկտեմբերի 1902 թ.

## ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախընթաց համարներում մենք խօսեցինք մի վարդապետի մասին, որ «հնախոյզ» է։

Այժմս հարկաւոր ենք համարում մեր ուշադրութիւնն դարձնելու այդ «հնախոյզի» վրայ, որ վարդապետ է և՛ ս. Էջմիածնի միաբան։

Իւրաքանչիւր կոչումն, իւրաքանչիւր պաշտօն մարդուն տալով որոշ իրաւունքներ, նրա վրայ դնում է և՛ որոշ պարտաւորութիւններ։

Արդ «հնախոյզ»-ը համ վարդապետ է, համ ս. Էջմիածնի միաբան։ Վարդապետական աստիճանը և ս. Էջմիածնի միաբանութեան անդամութիւնը հայր Խաչիկի վրայ որոշ և, միմիայն անբաններին անհասկանալի, պարտաւորութիւններ է դնում, որոնց կատարումը և պահպանութիւնը պահանջւում է արդէն կարգապահութեան (դիսցիպլինայի) օրէնքներով։

Սա ինչպէս է լինում, և որտեղ է լսուած, որ մի հասարակ վարդապետ, ս. Էջմիածնի միաբան կարողանայ այն աստիճան մոլորուել, որ ս. Էջմիածինը կեղծ համարէ և այդ «գիւտ»-ը փոխանակ իւր մերձաւոր իշխանութեանը յայտնելու, նրա որոշման սպասելու, այդպիսի վերին աստիճանի, անօրինակ փափուկ և ծանրակշիռ խնդրում, նա կարողանում է ինքնագլուխ ի տես աշխարհի իւր «գիւտ»-ը հրապարակ հանել։

Թողնենք և ձգենք մէկ կողմը «հնախոյզ»-ին և ի նկատի առնենք ստորադրեալին։

Միթէ այդպիսի բան կարող է տեղի ունենալ մի որևէ ուրիշ եկեղեցում, ուրիշ հոգևորականութեան մէջ, որտեղ կարգ կայ, որտեղ օրէնքն պահպանւում է։

Եթէ ուրիշ հազար ու մի երևոյթներից չիմանայինք, այս մէկ և խիստ կարևոր հանգամանքից՝ «Խաչիկ վարդապետի պեղումներից» պէտք է որ ամենքի համար պարզ լինի թէ ինչպիսի ողորմելի, ընկած դրութեան է հասել կարգապահութիւնը, այլև պարտաճանաչութիւնը մեր հոգևոր աշխարհում։

Պէտք է վերջապէս այդ աստիճան ի չարը չգործ դնել բարի ժողովրդի համբերութիւնը, պէտք է վերջապէս իմանալ, որ, ինչպէս բարեկարգ տէրութեան մէջ ընդունուած է, իւրաքանչիւր, աշխարհական թէ հոգևորական, պաշտօնեայ ամենից առաջ ինքն իւր անձն և իւր քէֆն պէտք է և պարտաւոր է ստորադրել պաշտօնին, և ոչ թէ պաշտօնը իւր անձին։

Ամենավնասակար պաշտօնեան նա է, որ իւր անձին է ծառայեցնում պաշտօնը և այդպիսով ստորացնում պաշտօնը։

ՎՐԻՊԱԿ.—«Նոր-Դար»-ի նախընթաց համարի առաջնորդողում ի միջի այլոց սպրդել է և հետևեալ, միաքը աղաւաղող, սխալները։ Լոյս է տեսել. «Հնդկաստան. Գերմանիա...», պէտք է կարդալ՝ «Հնդկաստան, Բիրմանիա»։ Մի ուրիշ տեղ լոյս է տեսել «...—տաճարը», պէտք է կարդալ «ս. տաճարը»։

## ՔՐՈՆԻԿՈՆ

Երեկ, դեկտեմբերի 14 ին, առաւօտեան ժամը 8½-ին, Վեհափառ Հայրապետին ներկայացան Յովնանեան դպրոցի աշակերտուհիները։ Ժամը 10-ին Նորին Վեհափառութիւնը, Դիւտ ա. քահ. Աղանեանի առաջնորդութեամբ, հաճեց գնալ նորերս վախճանուած Աւետիս Ղուկասեանի տունը ճաշելու, որից յետոյ ժամը 12½-ին մեկնեց Ալէքսանդրապոլի վրայով ս. Էջմիածին։ Այս երկրորդ անգամն է, որ Վեհափառը հանգուցեալ Ղուկասեանի տնից է մեկնում ս. Էջմիածին։

Ցանկալի էր, որ արժ. Դիւտ ա. ք. Աղանեանը այդ մասին կանխօրէն ծանուցանէր, որպէս զի Նորին Վեհափառութեան այդ օրը ներկայանալ ցանկացող պատուաւոր քաղաքացիները Վեհարան չըգնային։

— Ֆերգանի շրջանի նահանգապետի դեկտ. 4 ին խփած հեռագրից երևում է, որ Անդիժանի ինչպէս ռուսաց, այնպէս և տեղացիների քաղաքամասերը բոլորովին կործանուած են երկրաշարժից։ Ոչ մի շէնք չի մնացել։ Փլատակների տակ թաղուած են երեք ռուս ծառայող և երկու զինուոր։ Վիրաւորուած է 17 զինուոր, որոնցից 6-ը ծանր կերպով։ Բնիկներից մեռած են համարում 150 հոգի, գլխաւորապէս երեխաներ. վիրաւորուած է մօտ 300 հոգի։ Երկրաշարժը շարունակւում է։

—Տարեկան տեղեկագիր կազմելու համար, Թիֆլիսի ոստիկանապետը պրիստաւներին ուղարկել է առանձին թերթեր, որոնցով ամենամանրամասն տեղեկութիւններ պիտի հաւաքուեն քաղաքի բնակչութեան թուի մասին ըստ ազգութեանց և դաւանութեանց. պիտի գրուի թէ այս տարի քանի հոգի է ծնուել, մեռել, ամուսնացել. տեղեկութիւններ պիտի հաւաքուեն գործարանների, առևտրական-արդիւնաբերական հաստատութիւնների մասին և այլն։ Այս ցուցակագրութիւնը պիտի վերջանայ ամենաուշը մինչև փետրուարի 1-ը։

—Ներքին գործերի մինիստրութիւնը, «Կաւկազ»-ի ասելով, թոյլ է տուել Շուշու Ժամհարեան հիւանդանոցից օգտուելու համար հետևեալ վճարը. իւրաքանչիւր հիւանդից պիտի առնուի օրական 58 կոպէկ, իսկ մեռեալների թաղելու համար—7 ր. 50 կ.։

—Գեղարուեստների Կայսերական ճեմարանի այս օրերս կայացած ընդհանուր ժողովը, թոյլ է տուել Թիֆլիսի նկարչական դպրոցին յատկացնել նախահաշուից դուրս 5,000 ր.։

— Ղազախի առաջին մասի գործակալութիւնը յանձնուած է Ղազախ քաղաքի Զաքարիա քահ. Այրեսեանցին։

— Դեկտ. 13 ին չորրորդ օրն է, որ Ռուսիայի պօստը չի ստացւում, ռազմավիրական ճանապարհը մեծ ձիւնի համար խանգարուած լինելու պատճառով։ Այս երևոյթը ամեն ձմեռ կրկնւում է, չընայած, որ Թիֆլիսը հիւսիսի հետ կապուած է և՛ Թիֆլիս-Բալջարի-Ռոստով երկաթուղու գծով, հետևաբար և պօստը անընդհատ կարելի է ճանապարհել և այդ գծով։

— Առաջիկայ տարուայ համար «Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը բացուած լինելով, հրաւիրում ենք «Նոր-Դար»-ը ստացողների ուշադրութիւնը հետևեալի վրայ։ Նըրանք որոնք կամենում են վերանորոգել և առաջիկայ տարուայ համար թերթի բաժանորդագրութիւնը, պէտք է շտապեն և գրեն իրենց հասցէն պարզ և որոշ, ինչ լեզուով որ կամենում են։ Այն ձևը թէ «խնդրեմ ուղարկել թերթը» կամ թէ «խնդրեմ ուղարկել թերթը իմ նախկին ձեզ յայտնի հասցէով» բաւական չէ. պէտք է գրել ճիշտ հասցէն։ Նրանք, որոնք կամենում են «Նոր-Դար»-ը ստանալ առաջիկայ յունուարի 1-ից անընդհատ, պէտք է շտապեն վերանորոգել իրենց բաժանորդագրութիւնը, այլապէս թերթը չի ուղարկուիլ։

## ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՇՈՒՇՈՒՑ.—Թեմիս կոնսիստորիայի երկու հռչակաւոր գրագիրների գործունէութեան դէմ, երեկ քաղաքացիների կողմից երկու բազմաստորագիր բողոք ուղարկուեց ս. Էջմիածնին, խնդրելով մեր թեմը միանգամից ազատ կացուցանել այդ պարոններից։

—Դեկտ. 8-ի գիշերը բարձրացաւ սաստիկ քամի, որը տևեց մինչև 9-ի առաւօտը։ Քամին խարխուլ շինութիւններին բաւական վնաս է տուել։ Մեր քաղաքային կլուբը իւր պահեստի փողերը երևի չկարողանալով մի որևէ բարենպատակ գործի յատկացնել, այս ամառ քաղաքային այգիներում ամառային կլուբ է շինել տալիս։ Անցեալ գիշերուայ քամին այդ շինութիւնն ամբողջովին պոկել և շպրտել է մի կողմ։ Երևի ակմբանոցի գլխաւորները նորից հազարներ կըմսխեն նորը շինելու...

—Քաղաքումս, Գանձակի նահանգական դատարան բաժնում, քննւում էր պ. Մ. Պետրոսեանի, և հաշտարար դատարանի նախկին քարտուղար Գ. Մինասբէկեանի գործը։ Դատարանը, վկաներին հարցուփորձի ենթարկելուց յետոյ, ինժեներ Պետրոսեանին դատապարտեց երկու տարի բանտարկութեան։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ.—Այստեղ գաւառապետի և մի քանի անձերի նախաձեռնութեամբ հիմնւում է սպառողների ընկերութիւն, արժան գնով նիւթեղէն և կենսական պիտոյքներ մատակարարելու համար։ Ամեն մի անդամի բաժնեգինն է 10 րուբլի։ Վանքը իւր կողմից գրուել է 30 բաժին—300 րուբլի տալով, բացի միաբաններից, որոնք իրենց տնային գործածելիք կարևոր պիտոյքները ընկերութեան խանութից արժան գնով բերել տալու համար գրւում են անդամ վճարելով բաժնէգինը։ Ընկերութիւնն ունի կանոնադրութիւն, որը դեռ հաստատած չէ, նոր պէտք է հաստատուի։ Սա էլ մի նոր և օգտակար նորութիւն է Վաղարշապատցոց համար, եթէ յարատեւութիւն ունենայ։

—

ՕԼԹԻԻՑ.—Տեղիս տարրական երկսեռ դպրոցում ուսանում են 100-ից աւելի աշակերտ-աշակերտուհիներ, որոնց մեծ մասը չքաւոր ծնողների զաւակներ են. անցեալ տարիներում՝ չքաւոր աշակերտներին բաւականին օգնութիւն լինում էր, բայց մօտ 2—3 տարի է, որ այլ ևս օգնութիւն անող չկայ։ Դպրոցն ունի խնամակալ ընկերութիւն, որի անունով կայ մօտ 600 ր. դրամագլուխ, և ամեն տարի անդամներից ստացւում էր 3-ական րուբլի։ Անցեալ տարուանից Օլթիի գաւառապետ Ա. Փ. Պաւլովիչի հայեացքից չվրիպեց խեղճերին օգնելու խընդիրը, և նա քանիցս ժողովի հրաւիրելով անդամներին՝ նորից որոշ կազմակերպութիւն տուեց գործին և աշխատում է գործը լաւ հիմքի վրայ դնել։ Նոյնպէս եռանդով աշխատում է գործի համար տեղիս մաքսապետ Գ. Ա. Ձատնիև։ Այս տարի 20-ից աւելի խեղճ մանուկներ զրկուելու էին դպրոցից, որովհետև անկարող էին ուսումնաթոշակ վճարել, և ահա այդ եռանդուն գործիչների շնորհիւ վճարուեց բոլորի ուսման վարձը, իսկ այժմ 20 մանուկների և 3 աղջիկների համար պատրաստւում են հանդերձներ մօտակայ տօներին այդ ընծաներով խեղճ մանուկներին ուրախացնելու համար։ Անշուշտ մեր հասարակութիւնն ևս, ինչպէս մի ժամանակ էր, դարձեալ կարևոր դէպքում խնայելու չէ իւր աջակցութիւնը։

—

ՂԱԶԱԽԻՑ.—Եղանակներն անձրևային են. բարձր գիւղերում անընդհատ անձրև ու ձիւն է տեղում։

—Առ այժմ գողութիւնները դադարած են. տեսնենք ապագան ինչ է ցոյց տալիս։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի կոնսիստորիայից շրջաբերական է ուղարկուած բոլոր քահանաներին, որ սրանք չհամարձակուին մըտնել երէցփոխանների հաշիւների մէջ, որովհետև այդ իրաւունքը ժողովրդին ու հաշիւներին է պատկանում։ Շրջաբերականի առիթն եղել են Շուշու մի քահանայի զեղծումները։

Վատ տնօրէնութիւն չէ այդ, բայց ոչ ամեն տեղի ու ամենի համար։

Աչքի առաջ պիտի ունենալ այն հանգամանքը, որ ամեն եկեղեցու երէցփոխութիւնը մի առանձին հրապուրիչ պաշտօն չէ կազմում, որին ցանկանայ տիրանալ ամեն մարդ. գաւառներում շատ անգամ ստիպուած ենք լինում բաւականանալ անգրագէտ երէցփոխով և նոյնպիսի հաշուետեսներով։ Այս վերջիններն ընտրւում են մի տարով. մինչև դրանց համար համախօսական է կազմւում, մինչև դրանք հաստատւում են պաշտօնում, տարին պատում է և նրանք դեռ գործը չսկսած տեղի են տալիս նոր ընտրութեան։

Բանից ինչ է դուրս գալիս. այն, որ հաշուատեսները գործին հազիւ են հասնում և, որ գլխաւորն է, ժողովրդի հետ միասին ամենևին չեն էլ հետաքրքրւում եկեղեցու գործերով, Այս վերջիններն առհասարակ բաւականանում են հեռուից տեղի-անտեղի բամբասանքներ անելով երէցփոխի հասցէին։

Գաւառներում, ուր եկեղեցիները մի առանձին եկամուտ չունեն, ոչ ոք արժան էլ չի համարում ժամանակ կորցնել և հետաքրքրուել դրանց հաշիւներով, ուստի, ըստ կոնսիստորիայի վերջին կարգադրութեան, եկեղեցու շատ ու քիչ հաշիւը պիտի մնայ երբեմն անգրագէտ երէցփոխի տրամադրութեան տակ, որը ստիպուած է հաշիւը պահել տէր-ողորմայի օգնութեամբ իւր գլխի մէջ։

Հաշուի ամենամօտիկ և զգոյշ մարդը երէցփոխն է. հաշուատէսները գործակալի նման տարին մի անգամ հազիւ թէ մօտենում և ստուգում են. միթէ այդպիսի տեղերում, ծխատէր քահանայի միջամտութիւնն իսկապէս գործին վնաս է։

Չէ որ գողութիւնը մէկի մէջ աւելի հեշտ է կատարւում, քան երկուսի մէջ։

Զաքար. քահ. Այրեսեան

Ղազախ, 5 դեկտ.

## Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Ս. պատրիարք հայրը խառն ժողովի նոյեմբ. 19 ի նիստի մէջ տեղեկութիւն տուաւ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան մասին ձեռք առնուած կարգադրութիւններն և յոյս յայտնեց, որ մօտ օրէն կաթողիկոսի հաստատութեան կայսերական Պէրաթը կ՚շնորհուի։

—Նպաստից յանձնաժողովը գումարուեցաւ երէկ (Նոյեմբ. 18-ին) Ղալաթիոյ խորհրդարանը, ս. պատրիարք հօր նախագահութեամբ և զբաղեցաւ հետևեալ խնդիրներով. Յանձնաժողովը ս. պատրիարք հօրմէն տեղեկանալով որ հասած է ժամանակն որբանոց դպրոցներու երկամսեայ թոշակներն ըստ սովորականին կանխիկ ղրկելու, նկատողութեան առաւ ս. պատրիարք հօր պատրաստած ցուցակն է որոշեց նոյ- և Դեկտ. ամսաթոշակներուն առաքումը։ Յանձնաժողովը նոյնպէս ս. պատրիարքէն իմանալով որ որբանոց-դըպրոցներէն մէկ մասը ներկայ տարւոյ մէջ կրոլորեն իրենց քառամեայ շրջաններն պայմանաժամն և կան ուրիշներ ալ, որոց շրջանն ալ պիտի լրանայ քիչ ատենէն, խնդրոյ նիւթ ըրաւ թէ ինչ կարգադրութիւն պէտք էր սահմանել, և նկատելով որ արդէն որոշած էր քանի մը գլխաւոր կեդրոններու մէջ արհեստանոցներ հաստատել, երկրագործական դասընթացքով մը, և փակելի որբանոցներու մէջ գտնուած անչափահաս տղաքներն հոն փոխադրելով զանոնք վարժեցնել արհեստներու, հարկ դատեց որ այս կարգադրութիւնը գործադրուի, և հետևաբար որոշեց որ մինչև յառաջիկայ գարուն՝ որբանոցներու թոշակները մասամբ կամ ամբողջովին շարունակուին վճարուիլ ըստ պահանջման հարկին և անկէ ետք փակուելով բոլոր որբանոցները, թէ անոնց համար տրամադրելի գումարով և թէ ուրիշ զանազան նպաստներով որք դեռ խոստացուած էին և զորս յուսալի էր հաւաքել, արհեստանոցներ բացուին առաջին՝ Մշոյ մէջ, երկրորդ Մարաշի մէջ, Ժամհարեանց որբանոցն արհեստանոցի վերածելով, երրորդը Սեբաստիոյ, չորրորդը Բաղէշի մէջ, ի մասնաւորի նուիրուած Զանչեանցի յիշատակին և անոր անուամբ նուիրուած նպաստներով, հինգերորդը Վանայ մէջ։ Նոյնպէս գաւառական դպրոցներու համար որոշուեցաւ ամսական 50 լիրայի գումար մը՝ (տարեկան 600 լիրա), ս. պատրիարք հօր յանձնելով որոշել թէ դպրոցներն ո՛ր տեղեր բանալ պատշաճ է։—Թէ արհեստանոցներու կազմակերպումին և թէ դպրոցներու սահմանուելիք գումարներուն նպաստելու համար, որոշուեցաւ որբախնամ մարմիններու և զանազան ազգայիններու հրաւէր ուղղել մօտակայ տօներու առթիւ, խնդրելով Մանուկ Յիսուսի նուէրը:

—Գիմանանք թէ Չալկարա (Պիլէճիք) գիւղէն 25 տուն (ընդ ամենայն 52) բողոքական ազգայիններ անհովիւ մնացած ըլլալով, մտադրութիւն յայտներ են հայ. եկեղեցւոյ գիրկը դառնալու, և առ այս իրենց օսմ. Թէզքէրէները ղրկեր են Պիլէճիկի առաջնորդարանը, հարկ եղած օրինական ձեւակերպութիւնները կատարելու համար:

—Մշոյ պատր. փոխանորդ տ. Խոսրով Ծ. Վ. Պէհրիկեան պատրիարքարան ուղղած մէկ նամակով կըսէ թէ Մշոյ բանտին մէջ ևս գտնուած հայ բանտարկեալները վեհ. կայսեր բարձրաստիկ տարեդարձին օրն ազատ արձակուեր են:

—Բաբերդի առաջն. տեղապահը կըգրէ պատրիարքարան թէ Բաբերդի բանտին մէջ գտնուող քանի մը բանտարկեալներ հոկտ. 30-ին ազատ արձակուեր են:

—Մուշի, Աղթամարի, Ճապին Դաբանհիսարի, չմշկածագի առաջնորդարանները լքեալ կիներու ցուցակներն և խնդիրները ներկայացուցած էին պատրիարքարան: Կրօն. ժողովն անհրաժեշտ գտաւ ամբողջին համար դիմում ընել ս. Կաթողիկոսին, և խնդրել այդ լքեալ կիներու մասին վերջնական տնօրինութիւն մը:—

—Ս. Սահակ Հայրապետի մատրան նորոգութեան մասին ասկէ առաջ Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեան տեղեկագիր մը ուղղած էր Պատրիարքարան, յայտնելով թէ նոյն նորոգութիւնն յանձն առնող բարերարը կըփափաքի որ նորոգութեան յատակագիծն և անոր համար պէտք եղած ծախքին քանակութիւնը ճշդուի, ուրպէս զի օր առաջ կատարուի նորոգութիւնը Տ. Գէորգ Սրբազանի տեղեկագիրը ղրկուեցաւ Մշոյ Պատր. Փոխանորդ: Տ. Խօսրով Ծ. Վ.-ի, որպէս զի տեղւոյն վրայ հարկ եղած քննութեամբ ուզուած տեղեկութիւններն հաղորդէ:

—Եգիպտոս կսպասուին այս օրերս Հապէշներու Մենելիք Թագաւորին ոսկերչապետ Յակոբ Պողոսեան և Թագաւորական տան մատակարարապետ Նիկողոս Խաչատուրեանի անդրանիկ որդի Զաւէն Խաչատուրեան, որք Եգիպտոսէ պիտի մեկնին Եւրոպա, և հոն կարեւոր գնումներ պիտի կատարեն Մենելիք կայսեր յանձնարարութեան համեմատ և անոր հաշւոյն:

## ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Այս օրերս Թիֆլիսում ստացուեց Եգիպտոսի Կահիրէ քաղաքում հրատարակուող և այժմ Աղէքսանդրիա տեղափոխուած «Արտէմիս» ընտանեկան և գրական ամսահանդէսի մայիս-յունիս միացեալ համարը: Այս համարի մէջ խորին ուշադրութեան արժանի է տիկին Ս.-Վարդ ստորագրութիւնը կրող մի յօդուած «Միայն մանչերն են որբերը» վերնագրով: Յօդուածագիր տիկինը գանգատւում է, որ որբանոցներում խնամւում են միմիայն տղաները, մինչդեռ աղջիկները, որոնք ամենից աւելի կարօտ են խնամքի, երեսի վրայ են ձգուած:

Մեր բնագաւառներուն մէջ երբեմն աւելի որբանոցներ ունինք այս պահուս, որոնց մէջ պատսպարուելու մենաշնորհը կը վայելեն միայն ու միայն մեր սրտի հատոր հազարաւոր մանչերը. իրենց աղի ու լեղի արցունքներէն վերջ թող անուշ լինի իրենց հրամցուած Թերևս պատառիկ մը ցամաք հացը և բաժակ մը սառ ջուրը. և օրհնուած ըլլան անոնք, որ այդ որբուկներու բիբերէն կախուած արցունքը չորցնելու համար՝ լայն կամ նեղ՝ կը բանան իրենց սիրտն ու քսակը:

Եւ սակայն ադով կը վերջանայ ամենը:

Ո՞վ զրկած է քեզ, սև աչեայ, աղւոր ու լացող հայ աղջիկ, քու որբ մըլլալու հարկեցուցիչ ու տխուր իրաւունքէդ. դուն քու ցեղիդ խորթ զաւակն էիր արդեօք, անոր երեսին ծեծանք թուքն ու մուրը: Դուն քու պզտիկ գոյութիւնդ ուրիշներուն աւանդ տալու պէտքը չունէիր արդեօք. փողոցն էր քու ննջարանդ, դաշտը քու սպասղանարան ճաշարանդ. վաղահաս վշտերով ծանրաբեռնուած քու աղուորիկ գլխիկդ դնելու վայրիկ մը քեզի չուզեցին տալ քեզ վիճակակից աղբարիկներուդ քովիկը. չի տեսա՞ն քեզ ալ արդեօք անօթութենէն, ցրտէն, վախէն դողացող, դողահար. թէ՞ չուզեցին տեսնել որբութիւնդ. կամ աւելորդ տեսան քու գոյութիւնդ:

Դիտեմ. թէև հիմա դուն ոչ փոքրիկն ես մնացած, ոչ ալ դաշտերու ալախօսիկ արտուտիկին պէս լեռ ու ձոր ընկած ճար ճարակ կը ճռւա. բայց միթէ ադո՞նք ալ պիտի գային քու մատաղ տարիներուդ չի վայելող սգաւորի սև գլխուդ, որ ամեն ինչ կատարեալ ըլլար, որ դուն ալ մանչերուն նման որբերուն կարգը դասուէիր:

Դիտեմ. դուն լեզու չունէիս. բերան չունէիս բողոքող, քար սրտերը արգահատելի կացութեանդ վրայ շարժող. դուն արդէն օրօրոցէն չի լացիր, որ մայրդ քեզի ծիծ տար. բերան խուփ կեանքին օրօրոցէդ վարժեցուցին քեզ մարդիկ. քու աղբարիկդ այն օրէն բռնացաւ քու իրաւունքներուն վրայ, երբ քեզի ալ բաժին հանուած և արուած պտուղդ յափշտակեց ձեռքէդ ու կերաւ, և հայրիկդ իրաւունքը անոր վճռեց. որովհետև դուն աղջիկ էիր և աղջիկը իրաւունք չունի. քու աղուոր ու գառւոյ մազերդ քաշեց ու փետտեց քեզմէ կըտսեր եղբայրդ. ու երբ դուն լացիր 'Ա՜ղջիկ, ձայնդ կըկտրէս...' վրադ գոռաց հայրիկդ. ու դուն կամացուկ մը ձայնիկդ կտրեցիր վախէդ. ուրիշ ինչ կրնայիր ընել արդէն. դեռ չի մեծցած, դեռ ուրիշի մը տունը հարս չի գնացած, օրին մէկն ալ հայրիկդ մեռցուցին կամ մեռաւ... ու եղբայրդ ժառանգութիւնդ յափշտակեց ձեռքէդ ու կերաւ. և դուն լռեցիր: Քու ամբողջ կեանքին պատմութիւնը լռութիւնն եղաւ մէկ խօսքով. ու հիմա ալ լռութեանդ պատիժն է որ կը քաշես քու որբ մը նկատուելու շրջանիդ մէջ զրկուելով քեզի բաղդով վիճակակիցներուդ իրաւունքէն:

Հարկ կա՞յ մանրամասնութեան մտնելու և ապացուցանելու թէ՝ հայ աղջիկը նոյնչափ զըրկուած որբիկ մընէ, որչափ հայ մանչը և անոր կեանքը զուտ ազգային ապաստարանի մը տակ պատսպարելու աւելի զօրաւոր պատճառներ կան: Օտար վարձկան ձեռքեր ժամանակէ մ'իվեր բարութեան, մարդասիրութեան կեղծ վերարկուին հանգած՝ մտեր են մեր երկիրները, ու սիրտ կ'որսան. աւելին կայ. մեր հէգ որբուհիներուն պատիւը կորսան... յիշենք ճիւաղ Ֆէքքինները և սարսանք:

Յօդուածագիրն ակնարկում է մի քանի քստմնելի դէպք, որ իւր ժամանակին հաղորդուած էր և «Նոր-Դար»-ում: Յիշեալ Ֆէքքինը գերմանացի մի միսիոնար էր, որ սրանից մի քանի տարի առաջ, հանգանակութեամբ մեծ գումարներ ձեռք ձգելուց յետոյ, Զմիւռնիայում հայ աղջկանց համար որբանոց էր հիմնել և, այդտեղ բռնաբարելով իւր խնամքին յանձնուած որբուհիներից մի քանիսին, փախել էր Գերմանիա:

Յօդուածագիր տիկինն անհրաժեշտ է համարում զանազան վայրերում որբանոցներ հիմնել յատկապէս հայ աղջկանց համար և այդ պարտքը նա դնում է առաւելապէս կանանց վրայ: «Եթէ հայ կիներս չենք կարող առանձինն ընել այդ քայլ, գոնէ չենք ալ կարող արական սեռի մեր բազմաթիւ «Որբախնամներուն անդամակցիլ», —հարցնում է նա:

⁂

Վրաց մամուլի օրգանների մէջ շարունակւում է բանակռիւը հայոց և վրաց յարաբերութիւնների խնդրի մասին: Ստորև առաջ ենք բերում «Իւերիայի» դարձեալ մի յօդուածը հայերի դէմ: Մենք առանձնապէս մեծ տեղ ենք տալիս այդ լրագրի յօդուածներին, որովհետև մեզ համար կարևոր է ոչ թէ այն, թէ ինչ է ասում բարեկամը, այլ այն, թէ ինչ է ասում թշնամին:

## ԱՆՄԻՏ ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆ

(«Իւերիա» № 170)

> «Пишу. Диктуетъ совѣсть,
> Перомъ сердитый водитъ умъ.
> Лермонтовъ.

Մեր գրականութեան մէջ նորից վիճաբանութիւն է սկսուել հին չարիքի պատճառով: Ես խօսում եմ այն չարաբաստիկ հարցի մասին, որի անունն է վրացու և հայոց անհամաձայնութիւն: Երևում է, որ այս «ժամանակակից չարիքը» խորն է թափանցում մեր ժողովրդի սրտի և հոգւոյ մէջ. երևում է, որ այս չարաբաստիկ հարցը հիւանդութեան է փոխուել կեանքում, ապա թէ ոչ՝ մինչև այժմս ինչպէս չէր ձանձրացնիլ ընթերցողին և մոռացութեան հոսանքին չէր ենթարկուիլ. բայց բանն էլ այն է, որ երբ մի որևէ ազգի նեղում է սոցիալական ցաւը, այն ժամանակ այդ ցաւը երևում է երբեմնապէս, և գրականութիւնն էլ ամեն տեսակ «ռեցեպտ», ամեն տեսակ դեղ ու դարման է գործածում նրան առողջացնելու համար, իսկ հասարակութիւնը հետաքրքրութեամբ հետևում է այսպիսի ախտաբանական երևոյթին և նրա բըժշկուելուն: Մեզ համար այդպիսի ախտաբանական երևոյթ է հայերի և վրացիների յարաբերութիւնները և, իմ կարծիքով, պատճառն էլ այդ է, որ ժամանակ առ ժամանակ մեր գրականութեան մէջ նորոգւում է հին դաւիդառաբան:

Քաղաքային խրատասունների ընտրութիւնը ոչ մի նշանակութիւն չունի այստեղ: Վրաց հասարակութեան համար հայկական հարցն աւելի ընդարձակ և աւելի մեծ նշանակութիւն ունի: Մեր մայրաքաղաքի ինքնավարութիւնը և նրա բաղդը եթէ նոյն իսկ ընկնի ամբողջապէս վրացիների ձեռքը, սրանով դարձեալ վիճաբանութեան վերջ չի տրուիլ և հայերի մասին գրելու ցանկութիւնը չի վերջանալ, վրացու գրիչը չի դադարիլ: Ուղիղ է, Թիֆլիսը մեծ պատմական գանձ է կոթող մեր պատմութեան, բայց և այնպէս մեր մայրաքաղաքն մի փոքրիկ մասն է Վրաստանի: Բեօրնէի խօսքի համաձայն, եթէ Պարիզը Ֆրանսիայի գլուխը չէ, այլ գլխարկը, որի փոխարէն կարելի է ծածկել ուրիշը, ուրեմն մեզ համար Թիֆլիսը հասարակ փափանակ (քոլոզ) էլ չի լինիլ: Մեր մայրաքաղաքը յաճախ թշնամու ձեռքումն է եղել և վրացիութիւնը գլուխ չի ցաւեցրել դրա համար: Դրա պատճառն այն է, որ մեր ազգութիւնը և մեր հողն ու ջուրը գտնւում են անից դուրս և մեր թշնամու մտքովն էլ չէր անցնում մեր ազգայնութիւնը և մեր էութիւնը անպատուել: Ամենից առաջ վրացիութեան մտածման գլխաւոր առարկան էր ազգութեան պաշտպանութիւնը և եթէ փոքրիկ մայրաքաղաքը ժամանակաւորապէս ուրիշի ձեռքին լինէր, այդ բանը այնքան էլ ցաւ չէր պատճառել ոչ ոքի: Այս պատճառով մեր մատեանի մէջ հազիւ կըպատահէք, որ վրացիութիւնը գլուխ բարձրացնելով յարձակուէր օտար բերդապահների վրայ մայրաքաղաքն ազատելու համար: Այո, ընտրութիւնները ոչ մի նշանակութիւն չունին որ վիճաբանութիւնը հայոց և վրաց յարաբերութիւնների մասին վերանորոգուել է... Այս վիճաբանութեան առարկան վէրք է դարձել հասարակութեան համար և մինչև որ այդ վէրքը չըժշկուի, գործին չի կարելի ոչ մի կերպ օգնել:

Ձերը չգիտեմ, բայց ես զարմանում եմ, երբ հետևում եմ նորոգած վիճաբանութեան այս հին «ժամանակակից չարիքին» մասին. Զարմացնում և ապշեցնում է մանաւանդ «Ցնոբիս-Փուրցելի»-ի աղաղակը միութեան և եղբայրութեան մասին... «Կվալի»-ի քարոզը մէջ բերելու չէ, քանի որ այդ յարգելի գիտնական լրագիրը սկզբից ի վեր կէս սրտով էր նայում ամեն մի ազգութեան վրայ, միշտ պլոճիկի և ստամոքսի մասին է լալիս և երկնային հօրից այս է խնդրում միշտ՝ «զհաց մեր համապազորդ տուր մեզ այսօր...»: Տայ Աստուած, որ «Կըվալի»-ի խնդիրը կատարուէր, ոչ միայն հասարակ հաց, այլ և նազուք ու գաթայ էլ տրուէր նրան, բայց սրա հետ այն էլ չմոռանար որ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ...»:

Նա, այնէլի ասում. «Ցնոբիս-Փուրցելլին» սկսեց բարձր յանգերով երգել եղբայրութիւն և միութիւն: Լաւ և պատուական: Բայց կար ժամանակ,— և այդ ժամանակը վաղուց չէր,—երբ յարգելի լրագրի հրապարակախօսներին կարմիր քամի էր բռնում, քանի որ «Իւերեան» ուղիղ այդ եղբայրութեան և միութեան հարկաւորութիւննէր քաքարոզում: Այդ խօմ ծերացած և բորբոսնած լիբերալութիւն է և նոր առաջադիմական վարդապետութիւնը չէք հասկանում, ասում էին նրանք: Դուք էլ կըյիշէք թէ ինչ աղալ-մաղալ բարձրացրին այդ եղբայրութեան և միութեան շուրջը: Հիմա ժամանակները փոխուել են և «Ցնոբիս Փուրցելլի»-ն էլ գոյնը փոխել է: Ի նկատի պիտի առնել, որ առաջադիմական այդ լրագիրն այսպէս յաճախ է փոխում իւր գոյնը և ժամանակի յառաջընթացութեան հետ կամ մէկ բան է քարոզում և կամ միւս, բայց ամենից ուշադրութեան արժանին այս նոր երգն է եղբայրութեան և միութեան մասին: Եթէ ինձ հարցնէք, այս երգն աւելի արտաքին է, քան թէ ներքին, բայց և այնպէս այս վերջին ժամանակներս հայերի օգտին փաստաբանութիւնը «Ցնոբիս-Փուրցելի»-ի համար յատուկ պարտաւորութիւն է դարձել: Չգիտենք այս երևոյթի մէջ մօտիկ եղած Վանքի տաճարի զօրութիւնն է *), թէ այլ պատճառ կայ, բայց պարզ է, որ յարգելի լրագրի աչքի փուշն է դառնում վրացիներից նա, ով աննպաստ բան է ասում հայերի մասին: Այս կողմից «Ցնոբիս-Փուրցելի»-ի մի քանի պուբլիցիստները գերազանցում են ճշմարիտ և արիւնով «ազգասէրներից» (այս հեգնական բառը «Իւերայինն է»). հասկանալի է, որ հայերին պէտք չէ վրացի փաստաբան, բայց այս նորամոյծ փաստաբանութիւնը մանաւանդ մեզ համար նշանաւոր է: Այս երևոյթը պարզապէս ապացուցանում է, որ մեր պուբլիցիստիկան դեռ ևս չլոտ է և տհաս. որտեղ վիրաբոյժի նշտար է հարկաւոր, այնտեղ կամենել է բարձ բամպիւն խօսքերով ամոքել ժողովրդի վէրքերը բժշկելու համար: Պարզ է, որ վրաց պուբլիցիստի «փաստաբանութիւնն» աւելի մեր հրապարակախօսութեան երեխայութեան և այժմ արտայայտիչն է, թէ չէ ո՞վ չի իմանում, որ հայերն այնքան համարձակ են, որ մեր խրախուսանքին պէտք չունին, այն ինչ մեր պուբլիցիստիկան իւր համար ոչինչ չկարողանալով անել, ուրիշներին է պաշտպանում և հովանաւորում: Հասկանում ենք, երբ «Новое Обозрѣніе» լրագրի ղեկավարն աղաղակում է թէ եղբայրութիւն և միութիւն է հարկաւոր վրացիների և հայերի մէջ, հասկանում ենք նոյնպէս, թէ ինչու համար այսպիսի աղաղակով դիմում են յատկապէս վրացիներին, թէպէտ այդ եղբայրութիւնն ու միութիւնն ուրանում և քանդում են հայերը, բայց չենք հասկանում... Այո, պարոններ, եղբայրութիւնը և միութիւնը լաւ ուսմունք է, բայց միայն այն ժամանակ, երբ ամենքի համար պարտադիր է. բայց, երբ նեղուածին և կողոպտուածին եղբայրութիւն և միութիւն ես քարոզում, իսկ նեղողի սանձերը բաց թողնում ու իրաւունք տալիս անելու ամեն ինչ, ապա այն ժամանակ, ասացէք խնդրեմ, ինչ եղբայրութիւն և միութիւն կարող է տեղի ունենալ: Թումանեանց դարձած Թումանաշվիլին *) չէ՞ր այսպիսի եղբայրութեան և միութեանն էր ծառայում և այժմ էլ ծառայում է և հետն էլ խռովում է, երբ նրան չեն լսում և ծաղրում են: Հիմա այսպիսի քարոզութեան ցաւով են բռնուել «Ցնոբիս Փուրցելի»-ի հրապարակախօսները, որոնք այժմս ահագին ծրագրեր են գրում մեզ համար, թէ ինչպէս պէտք է տեղաւորուենք միմեանց մօտ մենք և հայերը:

Եթէ ուղիղն էք ուզում իմանալ, աւելորդ է վրաց ժողովրդին քարոզել թէ եղբայրութիւն և միութիւն ունեցիր հարևաններիդ հետ: Մեր ամբողջ պատմութիւնը ապացուցանում է, որ վրացին միշտ եղբայր էր համարում Կովկասի բնիկներին, և մեր մատեանը առաջին երեսի վրայ պատմում է մեզ, որ Հայոսը և Քարթլոսը հարազատ եղբայրներ են եղել: Սկզբից մինչև այժմ վրացին հային ընդունում էր ինչպէս եղբայր և հեզութեան ժամանակն էլ իսկական եղբայրութիւն էր անում նրան: Դժբաղդաբար այս միևնոյնը չի կարելի ասել հայերի մասին: Հայ հին պատմաբաններից գրեթէ ոչ մէկը լաւ չէ խօսում վրաստանի մասին և երբոր դէպք է պատահում, թոյն և բարկութիւն չի խնայում Վրաստանի համար: Զարմանում եմ և ապշում, թէ ինչ է արել բաղդից հալածուած Վրաստանը իւր հարևան ազգին, որ, օրինակի համար, մինչև անգամ Վարդան մեծը Վախթանգ Գորգ-Ասլանին վախկոտ և երկչոտ է դարձնում, իսկ դրա զօրքին անպատուութեամբ է յիշում... գուցէ և ձեզ յայտնի լինի, որ սկզբից ի վեր հայերը դաւ ունէին մեզ հետ մեր հող ու ջրի համար և միշտ այն էին մտածում ու աշխատում, որ մի բան գզլէին մեզանից: Երբոր կարողացան, չէ որ գզլեցին և Վանի շրջակայքից էլ աքսորեցին մեզ: Հիմիկուայ մեր դրութիւնն արդէն բոլորի աչքն է, հիմա հայերը դէպի Սուրամ են քշում մեզ: Համարձակութիւնը մինչև այն տեղ հասաւ, որ ամբողջ Վրաստանի քարտէզը Հայաստանի փոխեցին և «Մեծ Հայաստանի» այսպիսի քարտէզը տարածեցին ամբողջ Եւրոպայում: Այս խօմ այսպէս է: Բայց եղբայրութիւնը դեռ մեզ են քարոզում և մարդատեացները դարձեալ մեզ են համարում: Լոյսից էլ պարզ է, որ վրացիութիւնը միայն պաշտպանւում է ներս խուժած հարևանի դէմ և այս բանումն էլ եղբայրութեան և միութեան անունով կրկին մեզ են մեղադրում և գիտէք ովքեր: Մեր լիբերալները: Ծիծաղելի է, եթէ ցաւալի չլինէր: Բայց մեր գրականութեան անմտութիւնն էլ, հէնց նրա մէջն է կայանում, որ հիմա բարձրագոչ խօսքերը գրւում են մեզ: Դրական «Էտիկետը» դիմակ ենք շինել մեզ համար և այս պատճառով վրացի հրապարակախօսի համար ոչինչ այնքան հաճելի չէ, որքան «պրոգրեսիստի» և «լիբերալի» անունը: Մեր հարևաններին շատ լաւ յայտնի է մեր այս թոյլութիւնը և այս է պատճառը, որ յաճախ մեր առաջն են փռում զանազան լիբերալ և պրոգրեսիւ զիգի-պիգիներ: Երբոր ազգային մրցումն կայ, գոյութեան այդ պայմանը համարում են դասակարգային և ասում են, որ բուրժուան մրցում է վրաց ֆէօդալի հետ և ոչ թէ հայը վրացու հետ: Մենք ծափահարում ենք այսպիսի մրցմանը, բայց իսկականը չենք տեսնում: Հիմա էլ եղբայրութիւնը մեզ են քարոզում, կարծես թէ վրաց ազգը մերժելիս լինի այդ աւետարանական վարդապետութիւնը: Ժամանակի պտոյտը երեկուայ լաւ և հանգիստ հարևանին դարձրել է անհանգիստ: Այս անհանգիստը ներս է խուժել և կանգնել է մեր գլխին, իսկ մեզ պաշտպանուել ու իրաւունք էլ չի տալիս: Իհարկէ, եղբայրութիւնը աստուածային ուսմունք է, բայց «երկիր ի վերայ չարութեան կայ» և այս պատճառով ամենաառաջնակարգ նշանակութիւն ունի գոյութեան կռիւը:

Այո, մեր դրութեան մէջ ամենից առաջ հարկաւոր է արթնութիւն և կուլտուրական զօրեղ կանոնաւոր մըրցումն և ոչ թէ «նանի նանաի» (օրօրոցի երգ), որը թմրութիւն և քուն է բերում հասարակութեան վրայ: Ուղիղ այսպիսի թմրութիւնից և ննջելուց զերծ չի մնալ մեր ազգն էլ, եթէ նա հետևի մեր անժամանակ հասած լիբերալների երգին...

Ի. Քանխալիբնլի

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ, 11 դեկտեմբերի.— Ամսոյս 10-ին քաղաքային խորհրդի հերթական նիստում քննւում էր, ի միջի այլոց, Նոր կառուցուելիք ուղղափառ եկեղեցու համար տեղ յատկացնելու հարցը:

Այդպիսի մի նոր կրօնական հաստատութիւն հիմնելու միտքը, ինչպէս և միջնորդութիւնը, պատկանում է վրաց էքզարխին, որը, մօտերս այցելելով այստեղ, անձամբ զգացել էր նրա անհրաժեշտութիւնը:

Նախկին ուղղափառ եկեղեցին, լինելով մի կողմից փոքր, հեռաւոր և անկարող աղօթողների բազմութեան գոհացում տալու, ներկայացնում է միւս կողմից այժմ ծայրայեղ անյարմարութիւն հետևեալ պատճառով:

Ռուս բնակչութիւնը, որը մի ժամանակ խմբուած էր բացառապէս այդ եկեղեցու շուրջը, ներկայումս բոլորովին նօսրացել է այդ կողմերում, փոխադրուելով դէպի միւս հակադիր քաղաքամասը—երկաթուղու կայարանի կողմերը: Բնական է, որ թէ այդպիսի հեռաւորութիւնը և թէ մանաւանդ վերջերս ռուս աննստակեաց տարրի աճումը կրկնապատկէին այդ եկեղեցին յաճախելու անյարմարութիւն և ստեղ-

---

*) «Ցնոբիս Փուրցելի»-ի խմբագրատունը գտնւում Վանքի ասած եկեղեցու մօտ: Ծ. Թ.

*) Ակնարկում է «Новое Обозрѣніе» լրագրի խմբագրին. Ծ. Թ.

ծէին միևնոյն ժամանակ մի նոր եկեղեցու պահանջ:

Ուստի, քաղաքային խորհուրդը, լսելով Ալէքսանդրապոլի ուղղափառ եկեղեցական շրջանի դիկուցումը, որոշեց յատկացնել այդ նոր եկեղեցու շինութեան համար մի պատշած հողաբաժին, թողնելով քաղաքային վարչութեան վերջինի ընտրութեան և յատակագիծ կազմելու հոգսը:

Աւելի հետաքրքրական էր քաղաքի տարեկան ել և մուտի նախահաշիւը, որը թէև տրուած էր նիստի միւս քննելիք հարցերի ցանկում, բայց չքննուեց, որովհետև իրաւասուների մեծամասնութիւնը մօտ ծանօթ չէր նիւթին: Նախահաշիւը ներկայացնում է մի լայնանաղիր տետր, 140 տպագրուած էջեբից: Նրա քննութիւնը յետաձգուած է ամսոյս 12-ի անհերթական նիստին:

Ս. Մ.-Խաչհակեան

—

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

—

ՍԱԼՄԱՍՏ. 20 Նոյեմբերի.—Ենիչերիներն անփոփոխ կերպով շարունակում են իրենց ընթացքը: Ինչպէս երևում է, այդ պարոնները որոշել են իսպառ քար ու քանդ անել Սալմաստը: Նրանց համար սթ-ափուել, յետ կանգնել չկայ. ընդհակառակը ենիչերիական սխրագործութիւնները օրէ ցօր աւելի մեծ ծաւալ են ընդունում: Օր չի անցնում, որ Սալմաստի գիւղերում սպանութեան, բռնաբարումի կամ սպառնալիքներով փող առնելու դէպքեր չպատահեն: Կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ պաշտպանել տեղական ժողովուրդը ենիչերիների ոտնձգութիւնների դէմ. ընդհակառակը նա վերջինների կատարած չարագործութիւններից օգտուելով բանտարկում է խեղճ անմեղ գիւղացիներին և մեծ գումարներ փրկանք առնելով բաց թողնում: Այդպէս մօտ օրերս Հաֆթվան գիւղում տեղի ունեցաւ սպանութեան մի դէպք: Այն գիւղում ապրող ենիչերական խումբը թշնամացած լինելով նոյն գիւղում ապրող Ցակոբ անունով մի պարոնի հետ, որը երկար ժամանակ բժշկութեամբ էր զբաղւում այդ կողմերում, որոշում են սպանել նրան: Երկու օր առաջ ենիչերիներից 3 հոգի մտնում են գիշերով Ցակոբի տանը և ինչ որ պատրուակով դուրս կանչում: Խեղճ և միամիտ մարդը հազիւ երևում է շէմքում, երբ յանկարծ փողոցում սպասող ենիչերիները յարձակւում են վրան և տեղացող գնդակների տարափի տակ երկու մահացու վէրք ստալով գետին փռւում: Դէպքի հետևեալ օրը կառավարութիւնը, եղելութեան մասին տեղեկանալով, բանտարկում է գիւղի «աղսախկալներից» ութ հոգու, որոնք, ի հարկէ, բոլորն էլ անմեղ էին և ոչ մի բանից տեղեկութիւն չունէին: Նշանակելին այն է, որ բանտարկուածների թւում գտնւում է նաև այդ գիւղի ուսուցիչը...: Բարեբաղդաբար թէև մահամերձ վիրաւորեալը դեռ կենդանի լինելով յայտնում է կառավարութեանը, որ գիւղացիք անմեղ են, թէ ինքը ճանաչում է իրեն խփողներին, բայց Սարփարաստը չուզելով զրկուել այդպիսի մի բարեպատեհ առիթից և համեղ պատառից, գիւղացիներին բաց չի թողնում, այլ պահանջում է կամ իրեն յանձնեն մարդասպաններին կամ 400 թուման տուգանք վճարեն: Առաջինը, այսինքն ենիչերիներին բռնել և կառավարութեան յանձնել անհնարին բան է գիւղացիների համար: Մնում է խեղճերին բանտից ազատուելու միակ միջոցը՝ վճարել որոշուած տուգանքը, և երևի այդպէս էլ լինելու է:

Բայց ո՞ւր կըտանի սալմաստեցուն այդ մի կողմից անվերջ տուգանքները, իսկ միւս կողմից ենիչերիների գործ դրած անթիւ ու անհամար ոճրագործութիւնները: Սալմաստեցի հայը այսօր բարոյապէս մեռած է, տնտեսապէս քայքայուած: Նրա պատիւը ոտնակոխ է արուած, ընտանեկան սրբութիւնը պղծուած, հարսը, կինը, աղջիկը բռնաբարուած ենիչերիների կողմից, իսկ ինքն էլ գերի դարձած այդ ոճրագործ սրիկաների ձեռքում: Իսկ կառավարութիւնն էլ, փոխանակ օգնելու խեղճ ժողովրդին, լրացնում է նրա սև օրերի պակասը անվերջ տուգանքների ենթարկելով:

Դուցէ շատերը կարծեն, որ Սալմաստը հարստահարող ենիչերիների թիւը մեծ է լինելու, որ նրանք կարողանում են բռնանալ 15,000 հայ ժողովուրդ ունեցող մի գաւառի վրայ: Բայց այդ այդպէս չէ. Սալմաստի ենիչերիների թիւը հազիւ 20—22-ի է հասնում: Նրանք բաժանուած են ներկայումս երկու անհաշտ խմբերի: Այդ խմբերից մէկը, 7—8 հոգուց բաղկացած, բոյն է դրած Հաֆթվան գիւղում և կրում է Ա. անունը, իսկ միւսը, որը աւելի մեծ է,—Ս. և Մ. գիւղերում և կրում է Դ. անունը: Թէ ոչքա՛ն թշնամի են այդ խմբերը իրար հետ ցոյց են տալիս այն յաճախակի ընդհարումները, որ տեղի են ունենում նրանց մէջ: Եթէ մի բան կայ, որի մէջ դրանք հաշտ են, այդ էլ ժողովուրդի կեղեքման գործն է, որն այնքան զարհուրելի կերպով առաջ են տանում.

Հրայր

---

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Մի ընդարձակ առաջնորդող յօդուածի մէջ քննադատելով Մակեդոնիայի համար Թուրք կառավարութեան հրատարակած ռեֆորմները, բուլղարական պաշտօնական լրագիրն ասում է, որ այդ ռեֆորմներն ամենայնիւ անգոհացուցիչ են:

«Բացի այն,—ասում է լրագիրը,—որ Թիւրքիան արդէն բազմիցս հրատարակել է «ռեֆորմներ», որոնք թղթի վրայ են մնացել միայն (ինչպէս, օրինակ, 25 տարի սրանից առաջ յայտարարուած սահմանադրութիւնը), ներկայումս հրատարակուած ռեֆորմները ոչ մի երաշխիք չեն տալիս Թուրք իշխանութիւնների կամայականութեան դէմ, իսկ այս ամենակարեւոր պայմանն է քրիստոնեայ բնակչութեան խաղաղ զարգացման համար: Որքան էլ ողորմելի և աննշան լինին նորերս հրատարակուած ռեֆորմների մէջ խոստացուած բարելաւումները, դրանք կըմնան, ըստ սովորականին, մեռած տառ, քանի որ այդ բարելաւումները պիտի մտցնեն այն իշխանութիւնները, որոնք իրենց սրբազան պարտքն են համարում ճնշել և նեղել ռայային: Ոչ ժանդարմերիան, ոչ դատարանները չեն կարող կարգ սահմանել և ապահովել անկաշառ արդարադատութիւն, մանաւանդ, որ դրանց համար անհրաժեշտ գումարներ չեն յատկացուած: Դրանք «ռեֆորմներից» յետոյ էլ առաջուայ պէս կըծառայեն միայն իշխանութիւններին: Մակեդոնիայի անպաշտպան բնակչութեան դէմ, որովհետև անկախութեան և անաչառութեան վերաբերմամբ «ռեֆորմները» ոչ մի երաշխիք չեն տալիս... Այդ ռեֆորմներով, որոնք չեն դիմանում ոչ մի կրիտիկայի և որոնք շատ հեռու են Բեռլինի դաշնագրի 23-րդ յօդուածի պարզ գրուած որոշումից, Թիւրքիան ուզում է խուսափել մակեդոնական խնդիրը կանոնաւորապէս լուծելուց,—մի լուծում, որ պահանջում են նաև իր սեպհական, կարգին հասկացուած շահերը: Այդ ռեֆորմներով Թիւրքան միայն թող է փչում Եւրոպայի աչքին. »:

—Սոֆիայի ռուսաց դիւանագիտական ներկայացուցչի ամուսինը, տիկ. Բախմետևա, մի խումբ գթութեան քոյրերի հետ գնում է բուլղար-մակեդոնական սահմանագլուխը թրքական գազանութիւններից փախած ընտանիքներին օգնութիւն հասցնելու համար: Փախստականների թիւը հասնում է 2000 հոգու:

—

ԹԻՒՐՔԻԱ.—Կ. Պոլսից գրում են «Պետ Վեդ.»-ին. «Ռուսաց հիւպատոսի Միտրովիցա գնալու միջադէպի առթիւ ռուսաց դեսպան Զինովիեւի դիմումները նպաստաւոր հետևանքներ ունեցան: Ռուսաց դեսպանի պահանջմամբ, Դուռը Կ. Պոլիս է կանչել Միտրովիցում ռուսաց հիւպատոսարան հիմնելու դէմ եղած շարժման պարագլուխ նշանաւոր Իսսա Բոլետինացին»:

—Նոյն լրագիրին հաղորդում են, որ մեծ պետութեանց Կ. Պոլսի դեսպանները նորից փորձել են համոզել Թուրք կառավարութեանն իսկապէս էական ռեֆորմներ մտցնելու Մակեդոնիայում: Օսմանեան կառավարութիւնը, մի կողմից պատրաստուելով ռեֆորմներ մտցնելու, միւս կողմից լուրջ միջոցներ է ձեռք առնում վերջացնելու համար իւր պատերազմական պատրաստութիւնները: Բացի 500,000 թրքական լիրայից, որ կառավարութիւնը վճարել է Արմստրոնգի և Անսալդօյի գործարաններին ծովային պատուէրների համար, այժմ սուլթանական իրադէով հրամայուած է գնել 16 արագաձիգ թնդանօթ Կրուպպի սիստեմի, ռազմամթերք, մաուզերեան հրացաններ և պատերազմական փոխադրական վագոններ: Այս բոլոր պատուէրների արժէքն է ընդհանուր առմամբ 900,000 թրքական լիրա:

—«Républigue Français»-ն ասում է, որ Գերմանիայում գտած վարկի շնորհիւ Թիւրքիան նորոգել է իւր զօրաբանակի ամբողջ նիւթը Կրուպպի և գերմանական ուրիշ զինագործարանների հրացաններով: Թիւրքիան այժմ ունի իւրաքանչիւր զինուորի համար 3 հրացան, և թրքական արտիլերիան ամենայնիւ կազմ ու պատրաստ է: Սակայն սուլթանը բոլորովին ապահով է, որ բալկանեան պետութիւնները երբէք չեն միանալ և պատերազմ չեն յայտարարել Թիւրքիային: Նա լաւ գիտէ, որ այդ պետութիւնները զանազան դիտումներ ու ձգտումներ ունենալով եւրոպական Թիւրքիայի վերաբերմամբ, ոչ մի ժամանակ համերաշխ չեն գործիլ իրար հետ:

—

ՎԵՆԵՑՈՒԷԼԱ.—Անգլիական թերթերի ստացած տեղեկութիւններից երևում է, որ Վենեցուէլայի հասարակապետութեան մէջ նորից սկսում են հաւաքուել յեղափոխականների զօրքերը: Դեռ ես յայտնի չէ, թէ յեղափոխականները հաւաքուէլով ինչ են ուզում անել—միանալ արդեօք նախագահ Կաստրօյի հետ օտարերկրացիների դէմ կռուելու համար, թէ օգուտ քաղել նախագահի ներկայ դժուարին դրութիւնից և նորից կռիւ սկսել նրա դէմ: Ինչ էլ որ լինի, Վիլլեմստադից հեռագրում են, որ յեղափոխականների պարագլուխ գեներալ Մաթոսի առաջին զօրավար Ռոլանդօ նորից յեղափոխական շարժում է յայտարարել Վենեցուէլայում և արդէն հաւաքուել է իւր հրամանատարութեան տակ 1,200 մարդ: Ցեղափոխականների մի ուրիշ զօրավար, գեներալ Ռիերա, նոյնպէս յայտնուել է Կորօյի մօտ 1200 մարդով: Ցեղափոխականները մեծ թուով հաւաքւում են նմանապէս Բարկվիսիմետօյի գաւառում:

—

### ԷՄԲԵՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

—

Հեռագիրն այս օրերս հաղորդեց, որ Էմբերների հռչակաւոր ընտանիքը, վերջապէս, ձերբակալուած է Մադրիդում և յանձնուած է ֆրանսիական դեսպանի ձեռքը:

Դրանք 19-րդ դարի ամենահսկայ աւազակներն են, որոնք 20 տարի շարունակ կարողացել են անպատիժ կերպով խաբել ֆրանսիայի աչքի ընկնող դրամատէրերին ու դրամատները՝ կորզելով և՛ հաստատութիւններից, և՛ անձերից աւելի քան 50,000,000 ֆրանկ: Այդ ընտանիքն ապրում էր Պարիզում և արքայական կեանք վարում՝ ունենալով սեպհական ամեն ինչ՝ և՛ պալատ, և՛ այգի, և՛ կառքեր, և այլն:

Թէ հաստատութիւնները և թէ մասնաւոր անձերին խաբելու և փող կորզելու մէջ ամենաառաջնակարգ դերը խաղում էր տիկին Էմբերը: Չնայելով որ խաբերայութեան 20 տարուայ ընթացքում երբեմն ստուեր է ընկել այդ ընտանիքի գործունէութեան վրայ, բայց տիկին Էմբերը, որպէս եզական աֆերիստ, կարողացել է ուրիշների բոլոր կասկածները փարատել: Այս վերջին տարուայ ընթացքում միայն բանը յայտնուեց, և հասարակութիւնն իմացաւ, որ տիկին Էմբերը 20 տարի շարունակ ֆրանսիայի հարուստների քնթից բռնած խաղացնելիս է եղել նրանց: Երբ Էմբերի ընտանիքը ցանկանում էին ձերբակալել, տեսան որ այդ ընտանիքի բոլոր անդամներն էլ չքացել են արդէն, չնայելով որ ոստիկանութիւնն օր առաջ խիստ լուրջ միջոցներ էր ձեռք առել նրանց փախուստն արգիլելու համար: Էմբերների գործը բացուելով՝ սնանկացան մի քանի բանկեր և բաւականաչափ մասնաւոր անհատներ, որոնք այս 20 տարուայ ընթացքում վարկ էին բաց թողել Էմբերների ընտանիքին: Գործից երևաց և այն, որ այդ դիւային մեքենայութեանց խառն են և բաւականին թուով անձեր թէ մասնաւոր և թէ պաշտօնական: Այդ մեղսակիցներից մեծագոյն մասը ձերբակալուեց, իսկ մի քանիսն էլ արդէն օր առաջ իրենց փասա-փուսէն հաւաքել ու անյայտացել էին: Չնայելով որ Պարիզի ոստիկանութիւնը մինչև վերջին օրերս ամեն ճիգ թափում էր այդ աշխարհահռչակ աւազակ-ընտանիքը ձերբակալելու, բայց նրա հետքն անգամ չէր կարողանում գտնել: Ֆրանսիական կառավարութիւնը Պարիզի դատաւորներից մէկին՝ Լըմերսիէին էր յանձնել Էմբերների հետքը գտնելու և նրանց ձերբակալելու համար միջոցներ խորհել և տնօրինել: Լըմերսիէ գործին շատ եռանդով էր կպել, և այդ պատճառով էլ կառավարութիւնը, ինչպէս բացատրում են, ստիպուած եղաւ նրան պաշտօնանկ անել, որովհետև Լըմերսիէ Էմբերների գործն ստանձնելուց ցայսօր, մի քանի ամսուայ ընթացքում, միմիայն հեռագրի վրայ ծախսել է 1760 ֆունտ ստերլինգ (մօտ 16,544 ռ.), բացառապէս Էմբերներին գտնելու համար:

Պարիզի թերթերը վերջերս հաղորդեցին, թէ Էմբերների ընտանիքի պահանջատէրերից մի քանիսը, յոյսները կտրելով Պարիզի ոստիկանութիւնից, որոշել էին մի խմբակ կազմել՝ տիկին Էմբերին և նրա մեղսակիցներին գտնելու համար: 4000 անգ, ոսկի պարգև պիտի ստանար նա, ով կը յաջողէր ձերբակալել տիկին Էմբերին կամ որևէ տեղեկութիւն կը տար նրան ձերբակալելու համար: Որոշուել էր յիշեալ գումարը Պարիզի բանկերից մէկում աւանդ թողնել: Նորակազմ խմբակը թէև մի մեծ բան չէր, բայց նրա անդամները հարուստ էին և կառավարութեան պաշտօնեաներից բոլորովին անկախ պիտի գործէին: Խմբակի անդամներն իրենց մտքումը դրել էին անպատճառ բռնել խաբեբայ Էմբերներին, ինչ գնով էլ կարողանային այդ անել: Նրանք մտադրել էին նոյն իսկ աւելին ծախսել իրենց ստանալիք գումարից, միայն թէ կարողանային լուծել իրենց արդարացի վրէժը՝ օրէնքի խստագոյն արամադրութիւններին ենթարկել տալով նրան, ով խաբել էր իրենց այնքան ճարտարօրէն և այնքան երկար ժամանակ: Այժմ նրանք իրենց նպատակին հասած են սպանիական ոստիկանութեան շնորհիւ:

Էմբերների դատը, անշուշտ, խիստ հետաքրքրական է լինելու, ինչպէս ամեն մի մեծ գործ, որ ծագում է Ֆրանսիայում:

---

### „ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Դեկտեմբերի 12-ից

ՊԱՐԻԶ.— «Հաւասի գործակալութիւնը» հերքում է այն լուրը, թէ նախագահ Լուբէի որդին տիկին Էմբերից փոխ է առել 2,000 ֆրանկ:

ԼՈՆԴՈՆ.— Իտալական կառավարութեան համաձայնութեամբ, դեկտեմբերի 14-ին Օբբիա (իտալական Սոմալիական ծովափին) է մտել 700 հոգուց բաղկացած անգլիական մի զօրք, որն ուղարկուած է Բեբբերից:

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.— Անգլիայի և Գերմանիայի պատասխանները կազմուած են այսպէս. Ռուզվելտը կարող է ընդունել միջնորդ դատաւորի դերը կամ մերժել: Նա դեռ ոչինչ չի վճռել:

ԲԵԼԳՐԱԴ.— Լամզդորֆին երկաթուղու կայարանում ողջունեցին թագաւորի, կառավարութեան և քաղաքացիների ներկայացուցիչները: Օվացիաների ուղեկցութեամբ, գրաֆը մեկնեց ռուսաց դիւանագիտական ներկայացուցչի տունը, որտեղ գիշերելու է, առաւօտեան նա մեկնում է: Քաղաքը լուսավառուած և զարդարուած է դրօշակներով:

ՍԷՈՒԼ.— Կորէայի մինիստրութեանը վերստին յանձնուած է իշխանութիւնը:

ԲԵԼԳՐԱԴ.— Լրագրները տպում են Բելգրադի քաղաքացիների կոմիտետի մի կոչը, որ հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տրուի Լամզդորֆին, բնակչութիւնը ցնծագին ընդունելութիւն է պատրաստում: Դեկտեմբերի 12-ին գրաֆ Լամզդորֆը կըմեկնի Նիշ, որտեղ գտնւում է արքայական զոյգը: Պալատում ճաշ տեղի կունենայ: Գրաֆը մեկնելու է ուրբաթ:

ՍՈՖԻԱ.—Պատրաստութիւններ են տեսնւում Լամզդորֆին ընդունելու համար: Դիմաւորելու համար Ցարիբրոդ է գնալու մինիստր նախագահը: Երեկոյեան ճաշ տեղի կունենայ ռուսաց գործակալութեան մէջ, միւս օրը—ճաշ և ընդունելութիւն պալատում, կիրակի—ճաշ արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ժամանեցին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհիները և Ցէր Թագաժառանգը. մաղթանք կատարուեց, որից յետոյ Ձմերային պալատում նախաճաշ տեղի ունեցաւ:

---

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—

Աւստրիայի քաղաքներից մէկում վերջերս մուրացիկ մի կին էր մեռել: Երբ նրա գոյքերը քննութեան ենթարկուեց պաշտօնաւոր իշխանութեան կողմից,—բանից երևաց, որ մուրացիկ կինն ունեցել է 1680 ֆունտ ստերլինգի (մօտ 15,792 ռ.) արժեթղթեր և փող:

⁂ Դանիացի մի աղայ վերջերս մի նոր թնդանօթ է հնարել: Այդ հրացէնը կշռում է 15 գիլոգրամ (մօտ 37½ ֆունտ) և մէկ րոպէում արձակում է 300 անգամ: Այս նոր գիւտը ներկայումս գործածութեան մէջ է դրուած դանիական բանակում:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՀՐԱՒԷՐ

Ներկայ դեկտեմբերի 8-ին նշանակած ծխական ժողովը չկայացաւ—ծխականաց օրինական թիւը չլինելու պատճառաւ. ուստի պատիւ ունիմ խնդրել Ցափի թաղի ս. Գէորգ եկեղեցու յարգոյ ծխականներին կիւրակի ներկայ դեկտեմբեր ամսի 15-ին առաւօտեան 11 ժամին շնորհ բերել վիճակային կոնսիստորիայի ատենի դահլիճը-ծխական ընդհանուր երկրորդ ժողովի. Նախ հրաժարականս և հաշիւս ընդունելու և նոր երէցփոխի ընտրութեան ձեռնարկելու, և երկրորդ՝ Կոնսիստորիայի մի դրամական պահանջին գոհութիւն տալու: Այս ժողովը օրինական կըհամարուի ինչ թիւ ծխականաց որ լինի:

Երէցփոխան նոյն եկեղեցու՝
Առ. Վարդապետեանց

(1129) 3—3

### ՀՐԱՒԷՐ

Դեկտեմբերի 15-ին, կիւրակի, ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ լինելու է Ջրկինեան ս. Կարապետ եկեղեցու ծխականների վերջին ժողով նոր երէցփոխան ընտրելու: Ուստի՝ խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու ծխականներին շնորհք բերել եկեղեցի սրոշած օրը և ժամին յիշեալ ժողովի զբաղմունքներին մասնակցելու:

Թիֆլիսի հայոց եկեղեցիների Գործակալ՝ Գրիգորիս քահանայ Երզնկեանց

(1135) 2—2

### ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

յայտարարում է իգիտութիւն պ. պ. անդամների և կանդիտատների, որ մինչև առաջիկայ դեկտեմբերի 15-ը իրենց մուտքի տոմսակները 1903 թուի համար չնորոգողները կըհամարուեն իբրև կամովին ժողովարանից հեռացած:

(1098) 3—3

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՌՕՐԵԱՅ ԿԵՐԱԿՐԻ ԼՐԱՑՈՒՄ

փոքր քանակութիւնն ով

**ԳԵՄԱՏՈԳԵՆ ԲԺ. ԳՈՄՄԵԼԻ**

ԱՄԵՆ ՀԱՍԱԿԻ ԵՐԵԽԱՆՑ ԵՒ ՏԱՐԻՔՈՏ ՄԱՐԴԿԱՆՑ

ախորժակն արագօրէն բաց է անում, ոյժերն արագօրէն բարձրացնում, նեարդային սիստեմն ամրացնում: ԿԱՅ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ և գեղատնային ապրանքների խանութներում:

Զգուշացէք կեղծումներից! Պահանջեցէք անպատճառ «ԲԺ. ԳՈՄՄԵԼԻ» գեմատոգենը: Բոլոր երկրների հազարաւոր բժիշկներ փառաւոր կարծիքներ են յայտնել: № М 101083. 12—1

---

**ՍԱՊՈՆ ՀՈԼԼԵՆԴԵՐԻ** ՎԱԶԵԼԻՆԻ, ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԼԱՒԸ ԵՐԵՍԻ ՀԱՄԱՐ: Կտորը 30 կպ.

Իսկական վազելինի սապոն ցանկացողները պէտք է պահանջեն միայն ՀՈԼԼԵՆԴԵՐԻ վազելինի արդուզարդի սապոն: Ծախւում է Կայսրութեան բոլոր քաղաքներում— գեղատներում և գեղատնային խանութներում:

(М.) 86432 Торговый домъ «Парфюм. Лабораторія I. ГОЛЛЕНДЕРЪ», Разъѣзжая ул. № 13. 3—2

---



Բարձրդասակարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ ամենանշանաւոր դերասանուհիները հրաժարուեցին գործածել ԿՈՅԼԴ ԿՐԵՄ (Gold Creme), որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին: Դրա տեղ նրանք գործ են ածում

**CREME SIMON**

(Կրեմ-Սիմօն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը:

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմօն) La savon á la Creme Simon (Օճառ Սիմօնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները J SIMON 59Faubourg St.Martin Paris.

Մաս-մաս վաճառւում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ:

(M. 189,290) 24—7

---

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ !

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՈՍԿԵԲՈՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ

ՕՃԱՌ

**ԴԵՂԱԳՈՐԾ**

**Գ. Ֆ. ԻՐԳԵՆՍ**

Ոչնչացնում է մուները, արևից այրուածքը դեղին բծերը, ելունդները, բշտիկները, չ ազդում է աւելորդ քրտնելու դէմ և առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օճառ:

Մի կտորի գինը 50 կ., ½ կտորինը 30 կ.: Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և գեղատնային խանութներում:

Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկուայում:

(М.) №12452 24—15

---

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 16-ին

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը մասնակցութեամբ Տ. Սպէնդիարեանի

Ի ՆՊԱՍՏ Գ. ԱԲԷԼԵԱՆԻ

կը ներկայացնէ առաջին անգամ

ՍՈԴՈՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Դրամա 5. գործ. հեղ. Զուդէրմանի, թարգմ. Ս. Թառայեանի:

Մասնակցում է ամբողջ խումբը:

Սկիզբն է 8 ժ.

Տեղերի գները բէնէֆիսի են:

Տոմսակները վաճառւում են միմիայն թատրոնի կասսայում:

ՌԵԺԻՍԵՈՐ Ց. Աբէլեանց

(1133) 2—2

---

1902 թուի դեկտեմբերի 14-ին (փոխանակ 15-ին)

Արտիստիկական ընկերութեան դահլիճում

կայանալու է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

**ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ**

ԹԱՆԿԱԳԻՆ ՍԻՒՐՊՐԻԶՆԵՐՈՎ

(Նուէրներով)

Տոմսակի գինն է 2 ր. 20 կոպ.:

Սկիզբն է ժամը 9½-ին երեկոյեան.

Տոմսակները կարելի է ստանալ ընկերութեան կար ու ձևի արհեստանոցում: Ծանօթութիւն՝ ներկայացնելով տոմսակը, ստանում է իրաւունք սիւրպրիզի տոմսակի.

(1116) 4—4

---

Վրաստանի և Իմերէթի հայոց վիճակային կոնսիստորիայի Ատենում ի 18-ն այսօր դեկտեմբերի նշանակուած է աճուրդ վարձու տալու ունիոյ ս. Աստուածածին եկեղեցոյ գաւթում գտնուած երկու եկեղեցական կրպակները: Ցանկացողները պիտի ներկայացնեն պատշաճ գրաւական:

Անդամ կոնսիստորիայի՝

Զաքարիա քահ. Զաւրղեղեանց

(1130) 3—2

---

Նուխու երկու եկեղեցիները միասին կարևորութիւն ունին

**ՄԻ ՇՆՈՐՀՈՒՆԱԿ ԽՄԲԱՊԵՏԻ**

ց 600 րուբլի ռոճիկով, կարող ցանկացողներից խնդրւում է դիմել վիճակիս Տէր-Փոխանորդ Սիոն վարդապետին:

(1138) 5—1

---

ՀՐԱՒԷՐ

Սոյն դեկտեմբերի 15-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամի 11-ին լինելու երրորդ և վերջին անգամ էջմիածնեցւոց ս. Գէորգ եկեղեցու ծխականների ժողով երէցփոխանական ընտրութիւն անելու, ուստի խնդրում եմ եկեղեցու ծխականներին նոյն օրը և ժամին շնորհք բերել նոյն եկեղեցին ընտրութեանը մասնակցելու:

Ներսէս աւագ քահանայ Աբովեանց

(1136) 1—1

---

ՀՐԱՒԷՐ

Դեկտ. 15-ին կիւրակի, ս. պատարագից յետոյ, ժամի 11-ին, լինելու է ս. Նշան եկեղեցու ծխականների ժողով նոր երէցփոխան ընտրելու: Ուստի՝ խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու ծխականներին որոշած օրը և ժամին շնորհք բերել նոյն եկեղեցին՝ նշանակած զբաղմունքներին մասնակցելու:

Թիֆլիսի հայոց եկեղեցիների Գործակալ՝ Գրիգորիս քահանայ Երզնկեանց

(1131) 2—2

---

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ

**(ПОЛНЫЙ РУССКО-АРМЯНСКІЙ СЛОВАРЬ)**

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

Լոյս տեսաւ երրորդ պրակը: Գինն է 1 ր., ճանապարհածախսով 1 ր. 15 կոպէկ: Բառարանի բաժանորդագինն է 6 ր. Մինչև չորրորդ պրակի լոյս տեսնելը 3 ր. ուղարկողը կը համարուի բաժանորդ և անյապաղ կըստանայ արդէն լոյս տեսած պրակները: Չորրորդ պրակի լոյս տեսնելով բաժանորդագրութիւնը կըփակուի: Դիմել հեղինակին. Тифлисъ, Армянская Семинарія, А. С. Дагбашьяну և կամ книжный магазинъ «Гутенбергъ» Лорисъ-Меликовская ул. № 11. (1137) 2—1

Ծանօթ. Նոր պրակը ստանալիս ապառիկը անպայման պիտի վճարուի:

---

ГОРЬКАЯ ВОДА САКСЛЕНЕРА ИСТОЧНИКА

**„ГУНЯДИ ЯНОСЪ“**

СЛАБИТЕЛЬНАЯ ВОДА ДѢЙСТВУЕТЪ ЛЕГКО и ВѢРНО.

ПРЕИМУЩЕСТВА:

МЯГКІЙ НЕ ПРОТИВНЫЙ ВКУСЪ,

МАЛАЯ ДОЗА.

ВО ИЗБѢЖАНІЕ ПОДДѢЛОКЪ ПРОСИМЪ *ОБРАЩАТЬ ВНИМАНІЕ* на изображенную здѣсь МАРКУ ПОРТРЕТЪ которая неизмѣнно находит. на этикетѣ каждой бутылки настоящ. нашей воды.

ГОРЬКАЯ ВОДА САКСЛЕНЕРА
ИСТОЧНИКА ГУНЯДИ-ЯНОСЪ

*ПРЕДПИСЫВАЕТСЯ ВРАЧЕБНЫМИ АВТОРИТЕТАМИ ВЪ ТѢХЪ СЛУЧАЯХЪ, КОГДА ТРЕБУЕТСЯ УПОТРЕБЛЕНІЕ ЛЕГКАГО НО ВѢРН. СЛАБИТЕЛЬНАГО.*

ДЛЯ НОРМАЛЬНАГО ПРІЕМА ДОСТАТОЧНО ½ ОБЫКНОВЕННАГО СТАКАНА.

МНОГО МИЛЛІОНОВЪ БУТЫЛОКЪ ЕЖЕГОДН. СБЫТА.

ЯСНО ДОКАЗЫВАЮТЪ БЕЗВРЕДНОСТЬ СЛАБИТЕЛЬНОЙ ВОДЫ ЭТОГО НАТУРАЛЬНАГО МИНЕРАЛЬН. ИСТОЧНИКА.

Продается у всѣхъ дрогистовъ и аптекарей.

(М.) 9—5

---

Շաբաթ, դեկտեմբերի 28-ին 1902 թ.

Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ

**«ԴԵԿԱԴԵՆՏԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ»**

ԿՈՏԻԼԻՈՆՈՎ

Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան օգտին: Դահլիճը զարդարուած կլինի գեղարուեստօրէն ելէկտրական խաղեր չատրուաններ, շրջմոլիկ լոյսեր, կեօսկներ և այլն ղեկավարութեամբ ինժիներ-էլէկտրիկ Ա. Խիթարեանի և մեքենավար Գ. Կապլանսկու:

Տիկիններից խնդրւում է լինել դեկադենտական շրջազգեստով կամ գոնէ դեկադենտական սանդրուածքով, իսկ պարոնները լինելու են դեկադենտական փողկապով, հակառակ դէպքում թէ տիկինները թէ պարոնները ենթարկւում են 50 կոպ. տուգանքի. Զգեստասենեակում տիկինների տրամադրութեան տակ կը լինին՝ պարիկմախեր պ. Վարդանեան և մի կար անող կին:

Սկիզբն է երեկոյեան 9½ ժամին:

Տոմսակի գինն է 2 րուբլի 50 կոպ. բարեգործ. տուրքը միասին:

Տոմսակները վաղօրօք կարելի է գնել երեկոյթի կառավարչուհի իշխ. Մ. Թումանեանի մօտ (Барятинская № 8) և ընկերութեան դրասենեակում (Армянскій Базаръ, домъ Кретитнаго Общества, մուտքը բակից):

(1128) 4—2

---

**ԳՆԵՑԷՔ ՄԻԱՅՆ**

իւր յատկութեամբ յայտնի և կատարելագործուած

**ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՈՆ**

Պահպանում է կաշու փափկութիւնը և աւելացնում է նրա սպիտակութիւնը

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

(M.) № 121882 10—5

---

SANTAL MIDY

ՓԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ

**ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ**

ԹՈՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՌՈՒՍԻԱՑՈՒՄ

Այս կապսիւլների մէջ պարունակուած զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել հոնորէյի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ, կոպայ բալզամի և կուբեբայի դէմ: Սա ներգործում է աւելի արագ, չի յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չի պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կլոփը:

Կեղծիքներից խուսափելու համար՝ պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրայ լինի տառերով դրոշմուածները:

Պահեստը Ռուսիայի բոլոր դեղատներում:

123710 60—31

---

1865 Թ. Մոսկուա  1882 Թ. Մոսկուա

1870 Թ. Ս.-Պետերբուրգ **ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ** 1896 Թ. Նիժնի-Նովգորոդ

ԵՒ ՌԵՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱՐԳԵՒԸ (GRAND-PRIX)

Պարիզի ցուցահանդէսում տրուած է Ռուսիայում ՄԻԱԿ

**ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՌԵՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ**

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ,

որը հիմնուած է 1860 թուականին:

Խնդրում են ՌԵՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ գնելիս ուշադրութիւն դարձնէք տակերի վրայ եղած դրոշմներին



RUSSIAN-AMERICAN INDIA RUBBER
ТОВАРИЩ. РОСС.-АМЕРИКАНСК. РЕЗИН. МАНУФАКТ.
1860 Т.Р.А.Р.М. С.ПЕТЕРБУРГЪ
1860
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ.

մանաւանդ Ընկերութեան հիմնադրութեան „1860“ թուականին և „С.-Петербургъ“ բառի վրայ, որոնք զետեղուած են եռանկեան մէջ (գործարանի դրօշմը):

մեծ քանակութեամբ վաճառւում է

**„ԼԷՕՊՈԼԴ ՆԷՑՇԵԼԵՐ“ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ**

Ս.-Պետերբուրգում, Մոսկուայում, Ռիգայում, Ռոստովում-Դոնի վրայ, Եկատերինբուրգում, Իրկուտսկում և Խարկովում

(1057) 35—29

Доз ценз Тифлисъ, 12-го дакабря 1902 г  Տպարան ընկ.«Վերեյչև և Կամենմախեր»  Типографія Т-ва „Вереичевъ и Каменмахеръ“ Михайловск. пр., № 81 Телеф. № 852